Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~2541~~ 5968

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

ԱՐԲԵՑՈՂԻ ԶԱՏԻԿԸ

(ՊԱՏԿԵՐ)

ԹԻՖԼԻՍ
Տպ Թաւարթքիլաձէ, Կապ. Ա. Մանդու-
ան-Ցակորեան Սերգէեսկայա փող. № 1
1904

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

891.99
Ե-58

19 NOV 2011

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆ

ԱՐԲԵՅՈՂԻ ՁԱՏԻԿԸ

(ՊԱՏԿԵՐ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԹԻՖԼԻՍ
Տպ. Թաւարթքիլաձէ, Կապլ Ա. Մահտեսի-Յակոբեան
Սերգէևսկայա փող. №1.
1904

08.04.2013

28601

Дозволено цензурою 13 мая 1901 г Тифлисъ

ՀՍՍՌ ԳՐ. Պ. ԳՐԱԴ.
Гос. Библиотека
ՀՍՍՌ—Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

59680 · 66

ԱՐԲԵՑՈՂԻ ԶԱՏԻԿԸ

Թաթախման երեկոն է։ Ամբողջ քաղաքը տենդային աշխուժութեամբ թաթախման հոգսն է քաշում։ Փողոցներում մարդկանց և անասունների խմբերը շարան-շարան այս ու այն կողմն են վխտում. ուտելիքի պաշարեղէնով բեռնաւորուած։

—Գա՛հ, պա՛հ, պա՛հ, անթիքա դօշը, եղալի զուլթխի՛ն, կուտո՛ւմը, լսւում է մի կողմից։

—Նափաթ, հափաթ, մինամ շարաթ, (էժան, էժան, մինչև շաբաթ օրը). հա՛յ լաւ վիշինա՜, համով պասկա, լսւում է միւս կողմից։

Մի խօսքով ամեն կողմում լսելի են զանազան բացականչութիւններ, որոնցով ծախողը գովում է իր ապրանքը։

Մարդիկ, հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, առժամանակ մոռացած իրանց ամենօրեայ աշխատանքը, մաշող վշտերը, շտապում են թաթախման և Զատկի համար անհրաժեշտ ուտելիքներն ու խմիչքներն առնել, չը խնայելով քրտնավաստակ կոպէկները։

Պատարագի ժամանակը մօտեցաւ։ Զանգերը սկսեցին հնչել և ժամ հրաւիրել քրիստոնէաներին։ «Տին-տօն, տին-տօն» զոդանջում էին նրանք արտասովոր հնչիւնով և միմեանց արձագանգ տալիս։

Ժամաւորների ծայրը բացուեց և մանր հոսանքներով սկսեցին եկեղեցի տեղալ սատուածապաշտ մարդիկ։ Ամենից առաջ երևացին կանայք, որոնք հագած, կապած, պատրաստ էին և սպասում էին զանգերի կոչին։

Զալօներն ու մամիդաները յետևից էին գալիս, իսկ առաջևից, զուգուած. գեղեցիկ գլխարկներով ու հագուստներով պճնուած, հարսները և աղջիկներն էին գնում։

Մանուկները խօ դեռ զանգը չրտուած շտապել են եկեղեցի և գաւթում հաւաքուած ձու են կռուեցնում։

Ծղամարդիկ էլ, լսելով զանգերի կոչնակը, շտապեցին վերջացնել թաթախման առևտուրը և ներկայ լինել սուրբ պատարագին։

Քաղաքի խեղճ մասում ապրող ընտանիքներից մէկի աշխատող անդամն էլ գնացել էր շուկա փոքր ինչ ուտելեղէն գնելու թէ երեկոյեան թաթախուելու և թէ հետևեալ օրուայ համար։ Այդ օրը, իբր աւագ շաբաթ, գործարանի արհեստաւորներին շուտ էին արձակել և շաբաթավարձը վճարել։ Մելքօնը (այդ էր նրա անունը) իր ստացած դումարից մի քանի անհրաժեշտ պարտքեր պէտք է հատուցանէր, իսկ մնացածով էլ ձուկ, պանիր և հաց պիտի գնէր տան համար։ Նրա կինը՝ Անիշկան, ամբողջ օրը ծոմ էր պահել, որպէսզի երեկոյեան պասը բաց անէ։ Տանը ոչ մի կտոր հաց չը կար և տիկին Անիշկան էլ մօտը կոպէկ փող չ՚ունէր։

Երկու փոքրիկ երեխաները կերել էին դեռ երեկուանից մնացած մի կտոր չոր հացը և այժմ շարունակ—«Մայրիկ, հաց, մայրիկ, հաց» էին կանչում։ Մայրն էլ անհամբեր սպասում էր մինչդողին, երբ իր ամուսինը շաբաթավարձով և ուտելիքով տուն կդառնայ։ Նրա առանց այն էլ թուլակազմ, նիհար մարմինը չէր դիմանում ամբողջ օրուայ քաղցին և աւելի ևս թուլացել էր. այնպէս որ խեղճ Անիչկան շատ զժուարութեամբ էր ոտի վրայ մնում։ Անօթութիւնից ուշքը գնում էր։ Շարունակ երեխաներին յուսադրելով, հայրիկը հիմա կըգայ լաւ—լաւ բաներ կբերէ ուտելու, աչքը դռնից չէր հեռացնում. և ամեն մի շշուկ, ձայն նրանց ուշադրութիւնը գրաւում էր։

Բայց Մելքոնը ուշացաւ։ Պատարագը կէս եկաւ. «Սուրբ-Սուրբ»ի զանգերը տուին. մութն ընկաւ. ամեն մարդ, ուշացած արհեստաւորն անգամ, տուն էր գնացել և ախորժակը լարել փառաւոր թոթոխում ա-

նելու։ Սակայն Մելքոնը դեռ չէր երևում։

— Ցէր Աստուած, մտածում էր Անիչկան, չը լինի թէ դարձեալ զինետուն է գնացել. բայց ոչ, ոչ, անկարելի է. ինչ եմ մտածում. միթէ այսպիսի մի հրաշալի երեկոյ կըմոռանայ իրան ու դինուն անձնատուր կըլինի. չէ՞ որ գիտէ, որ տանը հացի փշրանք անգամ և ոչ մի կոպէկ չըկայ, գիտէ որ ամբողջ օրը քաղցած ու ծարաւ ենք մնացել։

Այսպիսի մտքերով նա աշխատում էր յաղթել իր քաղցին և հանգարտեցնել լացող երեխաներին, որոնք չէին հասկանում «կայ-չըկայ» խօսքը, այլ միայն լալով «քաղցած եմ» էին կանչում։

Անկատելի կերպով երկինքը ամպամեց և անձրևը սկսեց առատօրէն մաղել, այնպէս որ շուտով փողոցներում գոյացաւ մեծ ցեխ։ Բայց դեռ Մելքոնը չըկար. տանեցոց աչքը ջուր կտրաւ։

Նա ըստ իր սովորութեան, շաբաթա-

վարձն առնելով դիմեց դէպի գինետուն բոդազը թռչելու։ Թէև այսօր նա այն մրտադրութեամբ եկաւ, որ մի բաժակ խմէ ու անմիջապէս պաշար առնէ և դիմէ տուն, իրան անհամբեր սպասող ընտանիքի գրկում հանգստանայ, սակայն Բաքոսի չար ոգին կրկին մտաւ նրա փորը և հարբելու ծարաւը զրգռեց։ Մի բաժակին յաջորդեց երկրորդը, ապա երրորդը և վերջապէս օրհնուած չարէքանոցը առաջ եկաւ։ Մի երկու դատարկապորտ, գինետներում իրանց կեանքը հիւծող, մարդիկ էլ հանդիպեցին Մելքոնին և ընկերակցեցին կոնծարանութեանը։ Մելքոնի գլուխը տաքացաւ։ Զուտով նա մոռացաւ թաթախումը, Զատիկը, չաքաշ կնոջը, քաղցած երեխաներին և անձնատուր եղաւ գինուն։ Այդ երեկոյ կարծես հարբելու ախորժակը աւելի մեծացել էր և նա ագահաբար ուտում էր հաց ու պանիրը, կարմիր ձուն և հիւրասիրում ներս մտնողներին, մոռանալով, որ տանը այդ բոպէին ոչ միայն կարմիր ձու և գի-

նի, այլ և ցամաք հաց չկար։ Թերևս այդ խնճոյքը տևէր մինչև առաւօտ, եթէ ժամի 11-ին նրանց ստիպմամբ դուրս չշտանէին գինետներից։ Մելքոնը թոյլ չտուաց ընկերներին «փսօն» վճարել, այլ բոլորի փոխարէն ինքը վճարեց, ասելով. «Ոչինչ, ախպերներ, Զատիկ է, ես ձեզ զօնաղ արի։» Վեց բուբլի 50 կոպէկից նրա գրպանում մնաց 70 կոպէկ։

Դուրս գալով Բաքոսի նեխուած տաճարից, նա աջ ու ձախ գլորուելով դիմեց դէպի տուն։ Փողոցներում այլևս մարդ չը կար. ամենքը իրանց տներում զատկական սեղանի շուրջն էին բոլորել։ Տների միջից բուրում էր ուտելեղէնների ու դաբլու փրլաւի դուրեկան հոտը. լսելի էին ուրախութեան ձայներ, ծիծաղ, աղմուկ։

Անձրևը դեռ շարունակում էր տեղալ և թռչում էր Մելքոնին, որ հազիւ քայլելով ինքն իրան մրթմրթալով առաջ էր գնում ցեխերի միջով։ Ի լրումն կեղտոտուելու, մի քանի անգամ էլ գլորուեց ցե-

խի մէջ ու ցեխակոլոլ դարձաւ։ Մի կերպ տուն հասաւ։ Երեխաները երկար անօթութիւնից թուլացած ընկել, քնել էին. մայրը ուժասպառ փռուել էր տախտի վրայ և կիսաքուն մնացել։ Այլևս նրա համար մութ չէր, որ Մելքօնը դատարկաձեռն այլանդակ դրութեամբ կը վերադառնայ տուն։ Եւ նրա մաշուած կրծքի խորքերից, ինքնաբերաբար դուրս էին թռչում հառաչանքներ ու դիպչելով սենեակի չորս պատերին, ոչնչանում....

Դռան յանկարծական ուժգին հարուածը սթափեցրեց թշուառ կնոջը։

—Ո՞վ է, դուրս թռաւ նրա կոկորդից։

—Բա՛ց արա, ես.եմ, լսուեց Մելքօնի հարբած ձայնը և մի ուժեղ աքացի կրկին իջաւ դռան վրայ։

Անիշկան սաստիկ դժուարութեամբ շարժուեց, վեր կացաւ, դուռը բացեց։

—Ինչի՞ ես դուռը կողպել, խրոխտաց հարբած ամուսինը։

—Ա՜խ, Մելքօն, էլի՞ հարբած ես։ Գոնէ այս գիշեր, այսպիսի մի խորհրդաւոր օր չըխմէիր, յարեց կինը ցաւակցական եղանակով։

Մելքօնը ներս մտաւ։ Նրա բոլոր շորը ոտից ցգլուխ ցեխոտուել էր և տղմով ծածկուել, այնպէս որ նրա վրայ նայելը զզուանք էր առաջացնում։ Նա նստեց տախտի վրայ և գլուխը քարշ դցեց։

—Այդ ինչ է զրութիւնդ, Մելքօն, ինչով ես տարբերւում տղմում թաւալուող անասուններից։ Ա՜յ անխիղճ մարդ, ախր մինչև երբ մնաս այդ զզուելի հարբեցողը, մինչև երբ թունաւորես մեր առանց այն էլ թունաւոր, թշուառ կեանքը։

—Զատ մի խօսի, թէ չէ, սաստեց Մելքօնը և բռունցքը բարձրացրեց։

—Գոնէ այս մատաղ երեխաներիդ խղճա, աղի արցունքով շարունակեց կինը.— այսօր ամբողջ օրը քաղցած, ծարաւ ենք մնացել, ծոմ ենք պահել, մի այն թուք ենք կուլ տուել և սպասել, որ երեկոյեան վարձդ

կանչես և ցամաք հաց ու պանիր կը բերես. բայց դու կրկին մեռցրիր քո խիղճը։ Մինչև երբ, մինչև երբ....

Թշուառ Անիչկայի ձայնը կտրուեց. սրտի խոր կսկիծը փակեց նրա կոկորդը. Նա այլևս խօսելու ոյժ չունէր և թուլացած ընկաւ տախտին։

Իսկ Մելքոնը ալկօհօլի ազդեցութեամբ բոլորովին անզգայ, մի քանի անգամ փոխեց և գարշահոտութեամբ ու փխսանքով լցրեց նախ իր վրայ և ապա յատակը։ Կինը, ձեռներով երեսը ծածկած, հեծկլտում էր և ողբում իր և իր անմեղ զաւակների թշուառ դրութիւնը, որ ստեղծել էր Մելքոնը իր անզուսպ հարբեցողութեամբ։

—Գինի տուր ինձ, հրամայեց հարբածը գլուխը բարձրացնելով։

—Ա՜յ մարդ, ո՞վ է տուել մեզ գինի, երբ ես գնել. կարծում ես գինետանն ես։

—Քեզ ասում եմ գինի տո՛ւր, աւելի

ուժով գոռաց նա և բռունցքով տախտին զարկեց։

—Չըկայ, հոգիս, Մելքօն, Աստուած վկայ, որ չըկա՛յ։ Բայց տես, փողերդ ինչ արիր, ինչու հաց չըբերեցիր։

—Փո՛՛ղերը. ա՜յ, ա՜յ, ջիբումս են, չորջորջաց նա և ձեռը տարաւ գրպանը հանեց մի 20 կոպէկանոց։—Ա՜յ, տես, փող շատ ունիմ։

—Հէնց այդքա՞ն միայն։

—Շատ ունիմ, շատ, համա քեզ չեմ տայ, որ մեռնես, չեմ տա՛յ։

Նա դարձեալ ձեռը գրպանը տարաւ փող հանելու, բայց այնտեղ այլևս փող չըկար։ Ճանապարհին մի քանի անգամ վայր ընկնելու ժամանակ մնացած 50 կոպէկանոցը վայր էր ընկել, կորել և մնացել էր միայն վերջին 20 կոպէկը։

—Դէ, արագ բեր. հաց ու պանիր բեր, գոռաց Մելքօնը։

—Ա՜խ, ինչ անեմ, տէր Աստուած գնամ ջուրն ընկնեմ. երեխաներս մեռք են։

Արդեօք մեզ նման տառապող ընտանիք էլի կա՞յ, թէ միայն մենք ենք։ Ամբողջ օրը ծոմ մնալ, քաղցած, ծարաւ և մի այսպիսի ուրախալի երեկոյ մի կտոր չոր հաց անգամ չունենանք, երբ ուրիշները բազմատեսակ համեղ ուտելիքներ ունին։ Եւ այսպէս առաջին անգամը չէ, միշտ այս է մեր օրը……

—Տօ, յիմար կնիկ, աղաղակեց հարբածը, քեզ չեմ ասում։

Այս գոռոցի վրայ երեխաներն արդէն զարթեցին և չսթափուած —

—Հայրիկ հաց, հաց, բացականչեցին։

—Լսում ես, Մելքօն, վրայ բերեց Անիչկան, մինթէ չես զգում, մինթէ այս անմեղ ձայները չեն խայթում խիղճդ։ Գինու վրայ ծախսած րուբլիներից գոնէ մի քանի կոպէկով հաց կըբերէիր սրանց կերակրելու համար. սրանք ինչ մեղաւոր են, որ ծնել ենք նրանց և ցամաք հաց չենք տալիս ուտելու։

—Դու հարբած ես, գոչեց Մելքօնը և վեր կենալով, յարձակուեց կնոջ վրայ ու բռունցքով մի զօրեղ հարուած տուեց նրա կրծքին։

Երեխաները, տեսնելով այդ, ճչացին և ընկան յատակին փռուած մօր վրայ։

Այդ աղմուկի վրայ յանկարծ շէմքին երևացին դրկիցները, որոնք գիտէին Մելքօնի բնաւորութիւնը։

Տեսնելով անպաշտպան կնոջը գետնին փռուած, խղճահարուեցին, և կանչեցին ոստիկանին ու դռնապանին, որոնք քաշքշելով թրևեցին Մելքօնին դէպի ոստիկանատուն, որպէսզի հասարակական անդորրութիւնը չվրդովէ և կնոջը չծեծէ։ Խեղճ Անիչկայի աղերսանքը և երեխաների լաց ու կոծը չկարողացան ազատել տան սիւն՝ Մելքօնին ոստիկանատուն տանելուց։

Բարեսիրտ դրկիցները, հարբածին ուղարկելով, այլևս չըհետաքրքրեցին այդ ընտանիքի դրութեամբ, կռուի պատճա-

ռով, և շտապեցին իրանց ճոխ ու ուրախ ընթրիքը շարունակելու։

Իսկ թշուառ մայրն ու երեխաները դեռ երկար, մինչև առաւօտ ողբում էին։

Հետևեալ օրը, Զատիկ առաւօտ, այդ նկուղում գտան տարաբաղդ կնոջ անշնչացած դիակը և երկու երեխաներին կիսամեռ.......

«Տին—տօն, տին—տօն» հնչում էին բոլոր եկեղեցիների զանգերը և աւետում Զատիկը։ Ամեն կողմից լսելի էր «Քրիստոս յարեաւ» ուրախ շնորհաւորութիւնը.....

ՊԵՏ ԿՆՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
ГОС БИБЛИОТЕКА
ՀԱՍԽ-Арм ССР
Ա. Ф. МЯСНИКЯНА
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0332539

28601

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Նոյն հեղինակի լոյս տեսած աշխատասիրութիւններդ՝

1. ԽՈՐՏԱԿՈՒԱՆ ՍԷՐ (վէպիկ) գինը . . 30 կ.
2. ԳՐԲԱՑԻ ՍՏՐՈՒԿՆԵՐ (պատկեր) գ. . 5 կ
3. ԿԵԱՆՔԻ ՐՕՄԱՆԻՑ (վէպիկ) գ. . . 25 կ.
4. ԷՄԻԼ ԶՕԼԱ (փոքրիկ տեսութիւն) . . 5 կ.
5. ԼՕԽՄԱՆԻ ՀԷՔԻՄԸ (պատկեր) գ. . . 8 կ.
6. ՐԱՖՖԻ (համառօտ տեսութիւն) գ. . . 10 կ.
7. ԿԵԱՆՔԻ ԽՈՐՇԵՐԻՑ (պատկերներ) գ. . 20 կ.
8. ԱՌԱՋԻՆ ՄՈՒՐԱՑԿԱՆՈՒԹԻՒՆԸ (պատ.) գ. 8 կ.
9. ԱՐԲԵՅՈՂԻ ՁԱՏԻԿԸ (պատկեր) գ. . . 3 կ.

Թարգմանութիւնները՝

1. ԱՆԻՒՏԱ (Զեխովից) գինը . . . . 3 կ.
2. ԴԻՄԱԿ (Զեխովից) գինը . . . 5 կ.

Գրքերի պահեստը — Թիֆլիս — «Գուտտենբերգ» գրավաճառանոցում (Дворцовая ул. № 9 въ домѣ Лалаева, рядомъ съ Коммерческимъ банкомъ):

Հեղինակին գիմողները կստանան մինչև 50 ռուբլին 33%, աւելի պահանջողները 37% զեղչ:

Հասցէն նոյն գրախանութում:

ԳԻՆՆ Է 3 ԿՊԳ